# ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ ՄԵԾԱՐԳՈՅ ՆԱԽԱԳԱՀ ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴՈԿՏՈՐ ԲԱՇԱՐ ԱԼ ԱՍԱԴ, ՈՐ Ի ԴԱՄԱՍԿՈՍ, ՍԻՐԻԱ

Տիրոջ կամքով առիթ ունենք հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունելու Ձեզ, մեծարգոյ Նախագահ Սիրիայի Արաբական Հանրապետութեան, եւ Մեր բարձր գնահատանքը յայտնելու հայ ժողովրդի ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու սիրելի բարեկամիդ:

Մեծարգոյ Նախագահ Դոկտոր Բաշար Ալ-Ասադ,

Մեծապէս ուրախ ենք, որ Սիրիոյ ասպուածասէր ժողովուրդը Բարձրեալի օրհնութեան ներքոյ իր նոր կեանքն է կառուցում դարաւոր ու աւանդաշատ իր հողի վրա, որտեղ խաչուել են մարդկութեան պատմութեան եւ քաղաքակրթութեան կարեւոր ուղիները: Շարունակելով Ձեր պատուական Հօր, պետական մեծանուն գործիչ Հաֆեզ Ալ-Ասադի բարի աւանդները, Դուք նոր հազարամեակում Ձեզ յատուկ իմաստնութեամբ զօրացնում էք Սիրիայի Արաբական Հանրապետութիւնը՝ անշրջելի յաջողութիւններ արձանագրելով երկրի առաւել բարգաւաճման ու առաջընթացի գործում:

Ձեր երկիրը հարազատ է նաեւ հայորդեաց սրտերին: Դարեր շարունակ Սիրիոյ օրհնեալ հողի վրա կողք կողքի ապրում են հայ եւ արաբ մեր երկու ժողովուրդները եւ բարեզարդում իրենց բարեկամութիւնը աստուածահաճոյ իրագործումներով: Համայն հայութիւնը հոգու անհուն երախտագիտութեամբ է յիշում, որ Սիրիան Հայոց ցեղասպանութեան դժնդակ օրերին սիրով ընդունեց եղեռնից փրկուած եւ Դեր Զորի անապատներում հալածուած մեր ժողովրդի զաւակներին՝ ապահով ապաստան ու երկրորդ հայրենիք դառնալով նրանց համար: Ձեր բարեյիշատակ նախորդները յատուկ հոգածութեամբ Սիրիայում ազատ ապրելու, եկեղեցի, դպրոց ու ազգային հաստատութիւններ հիմնելու իրաւունք շնորհեցին պարագիր մեր հայրերին՝ առյաւէտ ամրագրելով մեր երկու ժողովուրդների եղբայրութիւնը: Գոհունակութիւն է Հայրապետիս համար, որ սիրիաբնակ Մեր հաւատաւոր զաւակները երկրի հպարտ ու արժանաւոր քաղաքացիներն են եւ, երախտիքի խորը զգացումով հանդէպ իրենց հայրերին սիրով հիւրընկալած Ձեր պետութիւնն ու ժողովուրդը, ազնիւ աշխատանքով ու առաքինի գործերով բազմարդիւն մասնակցութիւն են բերում Սիրիոյ հասարակական կեանքի առաջընթացին:

Ուրախալի է, որ այսօր հայ-սիրիական փոխգործակցութիւնը զօրանում է նաեւ մեր երկու պետութիւնների արդիւնաւոր յարաբերութիւններով՝ արգասաւորելով իրագործումներ պարբեր ասպարէզներում ի բարօրութիւն մեր երկրների ու ժողովուրդների:

Մեծարգոյ Նախագահ Սիրիայի Արաբական Հանրապետութեան, բարձր գնահատե-

լով Ձեր եւ Սիրիոյ պետութեան ու ժողովրդի բարի ու ազնիւ վերաբերմունքը հանդէպ Հայաստանը, մեր ժողովուրդն ու մեր Սուրբ Եկեղեցին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

**ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ**

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ գործոց յաջողութիւններ Ձեր պատասխանատու առաքելութեան մէջ:

Ի խորոց սրտի աղօթքով Աստուածային խնամք ու հովանաւորութիւն ենք հայցում Սիրիոյ բարեկամ երկրին ու ժողովրդին եւ մաղթում խաղաղ ու ապահով օրեր եւ անշրջելի առաջընթաց:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 19-ն յունիսի
յամի Տեառն 2009 եւ ի թուին հայոց ՌՆԾԸ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 519